# ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԽԵՂՁ ԾԱՂԻԿ

### Ա

Խե՜ղճ ծաղիկ. ինչ սրտով կը կոխկրտեմ զքեզ. միթէ դու կենաց պատկերը չես....։ Ամեն օր կը պճնէիր զքեզ բաղմերան գոյներովդ. իսկ հիմա թէպէտ խամրեալ, թառամեալ և յերկիր խոնարհեալ, բայց այնու հանդերձ միթէ գթութեան և յարգանաց արժանի չես։ Անակնկալ եղաւ մահդ, խե՜ղճ ծաղիկ, մինչդեռ դժբախտ ճակատագիրը խնայեց քու անդակից ընկերացդ։ Իրենց անուշաբոյր քաղցրահոտութիւնը կը սփոփէ զիս տակաւին, որոնք 'ի շնչել հեշտալունչ հողմոց, կը խոնարհեն իրենց դիւրաթեք և դիւրակոր ցողունն՝ երախտագէտ ըլլալով երկնից որ խնայեց իրենց և շնորհեց այլ ևս ժամանակ ապրանաց։

### Բ

Խե՜ղճ ծաղիկ. ուրախացիր և միսիթարուէ. վասն զի թէպէտ անմեղութեամբ կոխեցի զքեզ, բայց իմ աղէկտուր սրտիս մէջ ապաշաւանաց անջնջելի խայթ թողուց քու մահդ։ Քանիցս անգամ հարկ ըլլայ ինձ անցնիլ նոյն մարգագետնէն, միշտ պիտի յիշեմ զքեզ, մինչդեռ ընկերքդ ցուրտ և անտարբերեայ հայեցուածք պիտի ընդունին ինձմէ։

Քու կեանքդ քանի մ'օր միայն տևեց, բայց հիմա ինձի հետ կենակից պիտի ըլլաս, և պիտի ապրիս որչափ ես. քու փոքրկութեամբդ պատկերացուցիչ ես աշխարհի իրաց դիւրաթառամ վազանցկութեան։

### Գ

Խե՜ղճ ծաղիկ. 'ի մեծ մխիթարութիւն պիտի ըլլայիր ինձի՝ եթէ ժողովէի զքեզ. բայց հիմա մեծապէս կը ցաւիմ կոխկրտելուս համար։ Սակայն կը ժողովեմ գեղեցկութեանդ և քաղցրաբոյր անուշահոտութեանդ ամեն մնացորդները, և կը ծածկեմ'ի ծոցիս, որպէս զի իմանաս սրտիս սիրաբորբոք բաբախիւնը։

Աւա՜ղ ինձ, կը բաբախէ սիրտս այս վայրկենիս, և իւրաքանչիւր բաբախիւնը կը սրտաճմլէ զիս։ Թերևս պիտի գայ օր մը, յորում անակնկալ պատահարք յանդգայութեան վիճակ հասցրնեն սիրտս, յորում կը գտնուիս դու հիմա, խե՜ղճ ծաղիկ. և թերևս պիտի չունենամ մնացորդ ու սիրելի մ'որ սփոփէ զիս 'ի գերեզմանի. և յայնժամ պիտի նախանձիմ վրադ, խե՜ղճ ծաղիկ, մինչդեռ հիմա կ'արտասուեմ։



digitised by A.R.A.R.@